

# Ծաղկաման ձմերուկից



Ձմերուկի անպետք կեղևը կարելի է օգտագործել գեղեցիկ ծաղկաման ստանալու համար:

Անհրաժեշտ են՝ ձմերուկ, ծաղիկներ, ջրով աման:

Կտրում ենք ձմերուկի վերին հատվածը: Չգուշորեն, գդալի օգնությամբ հեռացնում ենք ձմերուկի միջուկը և ուտում այն: Ձմերուկի կեղևի մեջ տեղադրում ենք ջրով լի ամանը: Մեջը գեղեցիկ դասավորում ենք ծաղիկներն այնպես, որ ամանը չերևա:



Այսպիսի ծաղկամանը կարող է դիմանալ մեկ շաբաթից մինչև մեկ ամիս, կախված նրանից, թե ձմերուկի միջուկը ինչպես եք մաքրել: Ձմերուկի փոխարեն կարելի է դրում օգտագործել:



Նմանատիպ ծաղկամաններում գեղեցիկ են նայվում խոշոր ծաղիկներն ու մեծ դեկորատիվ տերևներ ունեցող ճյուղերը: Ծաղիկների կյանքը երկարացնելու համար անհրաժեշտ է թեք կտրվածքի օգնությամբ հեռացնել ծաղիկների ցողունների ծայրերը: